

**ԲԱՑ ՆԱՄԱԿ**  
**ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ԱՅԼԵՎ ԵՐԿՐԻ**  
**ՎԵՐՆԱԽԱՎՈՐ ԶԵՎԱՎՈՐՈՂ ԲՈՒՈՐ ԱՆՁԱՆՑ**

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջարկությանը, որն արժանացել է ձեր հավանությանը՝ Ադրբեջանի ռազմական ագրեսիայից տուժած զինծառայողների և նրանց ընտանիքների աջակցության նպատակով համազգային ապահովագրական հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ, կարծում եմ, որ այս գաղափարը, ընդհանուր առմամբ, ճիշտ է և անհրաժեշտ:

Հազիվ թե մեր հայրենակիցներից որևէ մեկը հրաժարվի օգնել մեր Հայրենիքի պաշտպաններին: Մեր հասարակության համար այս ապահովագրական հիմնադրամի ստեղծումը պարզապես հրամայական է...

Սակայն, ինչպես ասում են, փորձենք ցորենը զատել որումից...

Մեր անկախության 25 տարիների ընթացքում մեր հասարակության մեջ ձևավորվել է մի խավ (բնակչության 10-15 տոկոս), որը հարստացել է բնակչության ճնշող մեծամասնության հաշվին՝ խայտառակ թալանի և յուրացման ճանապարհով, օգտագործելով պետական ֆինանսական միջոցների և ազգային բնական պաշարների «տաշտակին» իր «մոտ լինելը»՝ թաքնվելով կեղծ, «անհերքելի» փաստարկներով, որ իբր կուտակված հարստությունը նրան է անցել ժառանգաբար և հեռու-մոտիկ «կարեկից» բարեկամների աջակցությամբ, իսկ երբեմն էլ՝ մանկության ընկերներից:

Ժամանակակից լիբերալ հասարակությունը հաճախ քննադատում է մեր անցյալը՝ խորհրդային երկրում մարդու իրավունքների և ազատությունների խախտման համար: Այդ դեպքում, խնդրում եմ բացատրել, թե ինչպես ստացվեց, որ հայրենական «հզորների» տատիկ-պապիկները, լինելով այդ երկրի օրինապահ քաղաքացիներ, կարողացել են ոչ միայն բարիք ստեղծել երկրի համար (որ մինչ օրս թալանվում է), այլ թաքուն կուտակել այդքան հարստություն, որով այժմ իրենց թոռներն ու ծոռներն ձեռք են բերում հողատարածքներ, կառուցում դղյակներ, իրենց զավակների հարսանիքներն ու ծննդյան օրերը նշում արտասահմանում, տիրում ամբողջ շրջաններ և բնակավայրեր (ոչ պաշտոնական), ունեն միլիոնավոր արտարժույթային միջոցներ օֆշորային գոտիներում, թանկարժեք գույք ամերիկյան կամ եվրոպական երկրներում և այլն:

Զարմանալի է, որ հայրենական նորահարուստները վերոնշյալին հասել են 25 տարվա տնտեսական, տրանսպորտային և տեղեկատվական շրջափակման ու Ադրբեջանի կողմից մշտական ռազմական ագրեսիայի պայմաններում:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ երբեմն ներքին «ռազմերկաների» պատճառով, վերնախավից որևէ մեկը «դուրս է մնում», սակայն նրանք չեն անհետանում, այլ հայտնվում են պահեստագործում՝ «խորհրդատուների» կարգավիճակով, իսկ «սուրբ» անձին ավելի մոտ կանգնածները ստանում են դիվանագետի աստիճան: Կադրերին (հատկապես կարևորներին) անհրաժեշտ է փայփայել և պաշտպանել ժողովրդի զայրույթից: Հանրային ունեցվածքի ներկայիս և անցյալի թալանի առաջնորդներից և ոչ մեկը քրեական պատասխանատվության չի ենթարկվել 25-ամյա մեր նորագույն պատմության ընթացքում:

Նույնիսկ ապրիլյան քառօրյա պատերազմի խուճապային վիճակը, որ պատել էր մեր «վերնախավին», շատ արագ անցավ, և ամեն ինչ վերադարձավ ի շրջանս յուր. Մակայն, իշխանության վերին էշելոններում ակտիվացան հայրենասիրական ելույթները:

Հաշվի առնելով վերոնշյալը և աջակցելով իրավական առումով չհիմնավորված նախաձեռնությանը՝ Ադրբեջանի ռազմական ագրեսիայից տուժած զինծառայողների և նրանց ընտանիքների աջակցության նպատակով համազգային ապահովագրական հիմնադրամ ստեղծելուն, առաջարկում եմ, առաջին հերթին ստեղծել նշված հիմնադրամի կանոնադրական կապիտալը՝ 1 տրիլիոն դրամ (կամ ավելի), այս միջոցները թալանչիներից (անձերը ձեզ հայտնի են) սեփականազրկման ճանապարհով, իսկ այնուհետև իրավական հիմքով (հանրային քննարկումներ և այլն) օրենք ընդունել աշխատող քաղաքացիների պարտադիր հարկման մասին: Այլապես անարդար է, որ թե Կենտրոնական բանկի նախագահը, թե 60 հազ դրամ աշխատավարձ ստացող գյուղական ուսուցչուհին, հիմնադրամին մուծեն 1000 դրամ: Անհրաժեշտ է տարբերակում՝ կախված աշխատավարձից:

Նման մոտեցման դեպքում, միգուցե գումար մնա նաև Վանաձորում բնակվող Միրզոյանների ընտանիքին օգնելու համար, որոնց ընտանիքում 2016 թ. փետրվարի 18-ին ծնվեցին եռյակ տղաներ, իսկ ընտանիքը կարիքի մեջ է: Չէ որ այդ տղաները ևս մեր ապագա պաշտպաններն են:

## **ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

*Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տնօրեն*